



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ



Րիստոսի հրաշափառ Ս. Հարո-
թյան տոնի առթիվ, Ամենայն
Հայոց Հայրապետ Երեմի Ս.
Օծուրյուն Տ. Տ. Գեորգ Զ. Կա-
թողիկոսի անունից «Էջմիածին» ամսագիրը
սրտագին շնորհավորում է և՛ Մայր Հայ-
րենիքի և՛ Սփյուռքի հավատացյալ հայ ժո-
ղովրդի ազգային-եկեղեցական մեծ տանը,
մաղթելով է՛լ ավելի հզորություն և բարգա-
վանում մեր Հայրենիքին և ժողովրդին, իս-
ղադրություն՝ աշխարհին, սեր և համերաշ-
խություն՝ աշխարհի բոլոր ժողովուրդներին:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու
կամարների տակ, մի անգամ ևս թնդում է
Ս. Հարոթյան սրտառույ օրհներգը, լույսի և
կյանքի մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեալ ի
մեռելոց», և իր աստվածային լուսավորու-
թյամբ, ֆրիստոնեական հավատի ուրախու-
թյամբ լցնում բոլոր ֆրիստոնյա ժողովուրդ-
ների հոգիները:

Հարոթյան, վերածնության կենարար շունչն
է փչում այս աստված ամեն կողմ, և՛ բնու-
թյան մեջ, և՛ մարդկանց սրտերում: Ս. Հա-
րոթյան տոնը ո՛չ միայն ֆրիստոնեական
կրոնի մեծագույն և ամենաժողովրդական
տոներից մեկն է, այլ նաև բնության գար-
նանաբույր զարթոնքի տոնը:

Ս. Հարոթյան տոնը ամենից առաջ մեռ-
եող և հարություն առնող բնության տոնն է,

երբ մեր աշխրի առաջ բացվում է գարնան
գեղազարդ պատկերը, լուսանաճանչ և հրե-
վալից, երբ ձմեռային մոռյլ մթությունից,
սառած, ֆարացած մեռելությունից հետո
կյանք գարնան շերմիկ շենով վերածաղկում
է, նորից է ծնվում, անում: Գարնանային կե-
նարար շունչը հարություն է տալիս մեռած
բնության:

Ս. Հարոթյան տոնը, սակայն, գերագան-
ցապես մարդկության փրկության, բարոյա-
կան, հոգևոր վերածնության տոնն է, գար-
նան զարթոնքի օրհնակով և պատկերով:
Մեր ազգային-եկեղեցական մատենագրու-
թյունը հարուստ է մեռելոց հարության և
հանդերձյալ կյանքի վերաբերյալ բնությու-
նից վերցրած պատկերներով: Հարոթյան մեծ
տոնի խորհրդի մասին Հովհան Խմաստասեր
Հայրապետը (Օձնեցի) իր «Ճառ Եկեղեցույ»
գրվածքում ասում է. «Ըստ նմին օրհնակի և
իմ պատկառուն և հայրապետն Ս. Գրիգոր
ըստ ահրուսական առակին, գյարութին
մարդկանց, բուռաց և անկաց օրհնակէր ի գա-
րուն բուսաբեր և ի դալարանալ մարդկան ի
գերեզմանէ»: Անանիա Շիրակացին իր «Զա-
տիկն Տեառն» գրվածքի մեջ, նույնպես բնու-
թյունից վերցրած պատկերով բացատրում է
Ս. Հարոթյան իրողությունը. «Յերկրորդ լու-
սատուն իշխանական գիշերոյ գայ թե՛լ յան-
ձին գորիսակ Միածնի Որդոյն Աստուծոյ,
պատի, թաղի, գուշակ թաղելոյ յարութեան
մեռելոց»:

Մարդկության, աշխարհի բարոյական, կրոնական վերագարթոնքը՝ հարությունը, սերտորեն կապված է մեռելների վերջին հարության հետ, ըստ Քրիստոնեական եկեղեցու հասկացողության և հաւատին: Ս. Հարության տոնը, այս իմաստով, գերազանցապես հավատի տոնն է. «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ յիս, քէպէտե մեռանի, կեցցէ» (Հովն., ԺԱ. 25):

Քրիստոսի հարության իրողությունը հիմնաբար է Քրիստոնեական եկեղեցու կյանքի և նրա աստվածաբանության: Իրենց ականատեսի անկաշառ վկայություններն են բերում համաշխարհային պատմական այդ մեծ եղելության մասին՝ Քրիստոսի անմիջական առաջյալներն ու աշակերտները, որոնցից ամենաարտոն ու երիտասարդ Մագքաղիենն լինում է առաջին վկան հարության զարմանահրաշ ղեպփին: Վախի, ցավի, հուսահատության առաջին ռոպեներից հետո, ուրախության և երկյոպածության զգացմունքով համակված, Մագքաղիենն սլանում է Քրիստոսի դառարկ գերեզմանի մոտից ղեպի վախեցած ու ցրված աշակերտների մոտ, վկա լինելու հարության մեծ եղելության, ըստ հարուցյալ Փրկչի հրահանգին, և ավետում նրանց հարուցյալ Փրկչի մասին. «Տեսի գՏէր»: Տխուր ու սարսափահար, քերահավատ աշակերտները, որոնք իրենց Վարդապետի մտնվածքը հուսախաբված էին զգացել իրենց և նրա հետ գերեզման իջեցրել իրենց բոլոր հանդուգն հույսերն ու երազները, Հիսուսի հարությանը բաջալերված, նոր շունչ ու նորոգի են ստանում և խմբովին սկսում են փարոզել ու հռչակել Փրկչի հարությունը. «Արդարև, յարեալ Տէր»: Առաջյալների ապագա գործունեության, փարոզության ամենահիմնական գաղափարը կազմում են Քրիստոսի մահն ու հարությունը: Հեթանոսաց մեծ առաջյալը՝ Պողոսը, հին աշխարհի մեծ կենտրոններում փարոզում է հիմնականում Քրիստոսի մահն ու հարությունը: Հեթանոս աշխարհը նրան զայրույթով է լսում նախապես. «Ջայրագնեալ վասն ուսուցանելոյ եռցա», որովհետև հարության փարոզը անհասկանալի էր նրանց. «Մտարոտի իմն դից բոփ պատմիչ լինելոյ, ֆանգի գՅիսուս և գյարութիւնն անտարանեն»: Պողոս ևս հեթանոս

աշխարհին բերում է Քրիստոսի հարության ի՛ր ականատեսի վկայությունը. «Ապա երևեցաւ և ինձ», և հարուցյալ Փրկչի վրա հավատը դառնում է հիմքը իր փարոզության. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է փարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»: Քրիստոսի հարությունը գրավական է ու երաշխիք մարդկության փրկության. «Յարիցեն մեռեալք և կանգնեցցին որ իցեն ի գերեզմանի» (Եսայի):

Քրիստոսի հաղթանակը մահվան վրա, նրա ամենահաղթ հարությունը գերեզմանից, նոր էջ է բացել, նոր շարժման, նոր կյանքի սկիզբ է դրել պատմության մեջ: Հարության գաղափարը մեծ լուսարձակի նման լուսավորել է և լուսավորում է Քրիստոնեյա աշխարհի կյանքի նախապարհները: Իր ժամանակին հարության գաղափարը նոր կյանք ներարկեց հին հասարակության, գերեզմանի եզրը հասած հասարակության երակների մեջ և խորը, արմատական հեղաշրջում առաջացրեց մարդկության մտածողության, բարոյականության, իրավունքի պատմության մեջ, և փրկեց մեղքի, տգիտության, նախապաշարունների մեջ ապրող մարդկանց դժբախտ որդիներին:

«Քաջալերեցարո՛ւք, զի ես յաղբեցի աշխարհի», — այսփեմն մահվան, մեղքի, հեշտուն է Քրիստոսի հարազատ ձայնը այս սրբազան առավոտյան:

Քրիստոսի երկրավոր կյանքը, Բեթլեհեմի անշուք մտուրից մինչև Գողգոթայի արյունոտ բարձունքը հանդիսանում է մի սրբազան պայքար, նվիրում, հանուն աշխարհի խաղաղության, մարդկության փրկության և երջանկության, ընդդեմ խավարի ուժերի: Պայքարը Քրիստոսի և խավարի ուժերի միջև իր բարձրագույն կետին է հասնում Գողգոթայի վրա, խաչի բարձունքում: Նա լրիվ պատրաստված է այդ պայքարի համար: Եվ խաչը ուսին բարձրանում է պարտականության, զոհողության, նվիրումի Գողգոթան, իր արյունով և կյանքով մի անգամ ևս նվիրագործելու իր ուսմունքի նշմարտությունը:

Աշխարհի, մարդկության համար նա մեռնում է խաչի անարգ մահով: Առանց խաչի և խաչելության խորհրդի՝ չկա և՛ հարություն և՛ փրկություն: Քրիստոս իբրև մահապարտ

խաշվեց. «Ընդ անօրէնս համարեցա», և խաշի վրա ծագեց հարուստի փրկարար այգը. «Որ գմեր մեղս իւրով մարմնովն վերաշոյց ի խաշափայտն» (Ա. Պետր., Բ 2) և «Արար խաղաղութիւն արեամբ խաշին իւրոյ, ու ինչ յերկրի և որ ինչ ի յերկինս» (Կողոս., Ա. 20):

Նա մեհակ է խաշի վրա. բովում է, որ նա լքված է բոլորից. աշխարհը ընթանում է իր սովորական հունով. երկինքը լոն է. հրեշտակների գնդեր չեն գալիս նրան փրկելու խաշի անարգ դատապարտությունից. աշակերտները, բարեկամները՝ անհովիվ ոչխարների նման ցրվել են այն ցավագին վերհուշումով, որ «Ջայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել»: Խաշի վրա Քրիստոս երկնում է հարուստի պայծառ լուսածագը. առանց Գեթսեմանիի խորհրդի, առանց Գողգոթայի շկա հարություն ո՛չ Քրիստոսի համար, ո՛չ Բրիտանիայ աշխարհի համար:

Այդ ընդհանուր հուսալքման, նահանջի մեջ մի ուրիշ մահապարտ ճանաչում և հայտարարում է խաշի խորհուրդը և ինքն էլ խաշի բարձունքից տեսնում է Ս. Հարության հրաշափառ առավոտը: Քրիստոսի հոգում երկնի անսահման խաղաղությունը կա. խաշի բարձունքից, տառապանքի բարձրագույն կետին, զոհաբերության վսեմ մոմենտին, տառապանքի մեջ, տառապանքի միջոցով եղբայրանում են Աստված և մեղապարտը, որը հավատում է նրան. «Յիշեա՛ գիս, Տէ՛ր, յորժամ գաս արհայութեամբ քով»: «Այսօր ընդ իս իցես ի դրախտին»: Մեռնելու մոտ եղող, ավագակը Աստուծո նորդի է հայտարարվում և Քրիստոսի անշունչ գնված առաջին մեղավորը:

Գեթսեմանին, Գողգոթան, Ս. Հարությունը սերտորեն կապված են միմյանց հետ և՛ Քրիստոսի կյանքում և՛ Բրիտանիայի կյանքում: Ս. Հարության լուսապայծառ առավոտյան առաջին հանգրվանը Գեթսեմանին է, ապա Գողգոթան: Հասնելու համար Ս. Հարության ավետիքին, հարկ է անցնել Գեթսեմանիի միջով, բարձրանալ Գողգոթան: Գողգոթան նախատոնն է Հարության մեծ տոնին:

«Ամենայն ինչ կատարեալ է». ամեն ինչ կատարվել է աշխարհի, մարդկության փրկության համար, և Քրիստոս խաշի վրա, անվրդով հոգով թողնում է այս աշխարհը. նրա

աստվածային դեմքի վրա փայլում է իր նպատակին հասնող մեծ մարտիրոսի հաղթական հափշտակությունը. նա զգում է, որ իր և աշխարհի մուր ուժերի, մահվան միջև վճռված է պայքարի հաջող ելքը ի նպաստ իրեն: Պատմության մեջ առաջին անգամ մահը տանու է տվել. «Մահուամբ գման կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Միևնու Քրիստոս, մահվան սարսափը իշխում էր Ադամի բոլոր որդիների վրա: Մահը գարե շարունակ հարվածել է անխնա մարդկությանը. կյանքում անխուսափելի է մահը, բնության օրինաչափությունն է դա. «Լեցուն է մահը միշտ շար հույզերով», մտնում է ամեն դոնից և դարպասից և վրդովում կյանքի խաղաղությունը, ընտանեկան երջանկությունը: Աշխարհը՝ փոշիի հատիկ է մահվան առաջ. «Այս տարտամ ու մուր աշխարհի վրա իր գործն է կատարում նա հմտորեն». իզուր չէ, որ նա եղել է աշխարհի տերը, ամենագոր ուժը աշխարհում: Կյանքն ու մահը միասին են շրջում աշխարհի վրա. կյանքի հետքերի վրայով մահն է փայլում կրեկակոխ, «սուր գերանդին ուսին», և փնտրում է թե «զո՞վ կլանիցէ»:

Ինչպիսի՛ նակատագրական դժբախտություն կլինե՞ր մահը կյանքի համար, մարդկության համար, եթե շլիներ հարության սփոփարար գաղափարը, որը լուսավորում է մահվան սարսափելի և անբախանցելի գաղտնիքը: Գերեզմանը մարդկային մարմինը միայն կարող է ընկլուզել իր մուր ծոցում. «Հող էիր անդրէն և ի հող դարձցիս». բայց մահը իշխանություն չունի հոգու վրա. գերեզմանի մոայլ փոսից, մահվան արհավիրքներից հետո ծագում է հարության խաղաղ առավոտը մարդու համար, ինչպես գարունը՝ ձմեռային մեռելությունից:

«Յիսուս Քրիստոս խափանեաց գման և լուսատու արար զկեանս և զանեղծութիւն ի ձեռն անտարանին» (Բ Տիմոթ., Ա. 10): Քրիստոս լուծեց մահվան կապանքները, շղթայեց նրան իր հզոր ձեռքով, «կապեալ զիշխանն մահածին», ցրեց գերեզմանի վրա ծանրացող սուգի, տրամաբյան, վշտի ծաւեր ու քանձմառայնությունը, նա տիրացավ կյանքին և պահպան հրեշտակ հանդիսացավ նրան: «Աստուած չէ՛ մեռելոց, այլ կենդանեաց»:

Մարդը ոչ միայն այս աշխարհի համար է ծնված, այլ նաև հավիտենականության համար: Հավիտենական կյանքն է հավիտենական մահ. անա այսպես է ներկայանում հարության գաղափարը յուրաքանչյուր հավատացյալի առաջ, Ս. Հարության այս նորածագ առավոտյան: Ով չի հավատում այսօրվա մեծ տոնի խորհրդին, նա ֆրիստոնյա չէ, այդպիսի անհավատը կենդանի դիակ է. «Ձի քէ ոչ հաստացէ՛ք քե ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր»: Հարության հավատը չի կարելի փոխարինել ոչ մի ուրիշ բանով. ոչ հույսը, ոչ բարոյականությունը, ոչ ֆրիստոնեական փիլիսոփայությունը չեն կարող հավատի տեղը բռնել: Քրիստոս հարուցյալ է «ի մեռելոց» բառ ֆրիստոնեական հավատի իբրև «առաջին պտուղն ներշնչելոց»:

Այլևս փակ գերեզման չկա. Քրիստոսի գերեզմանի հետ բոլոր մեռյալների գերեզմանները բացվում են: Հարուցյալը կենդանություն է բաշխում բոլորին: «Արի՛, որ ներշնչեց և կանգնեա՛ց ի մեռելոց և լուսաւորեցէ զբեզ Քրիստոս»:

Ս. Հարության այս շնորհաբեր առավոտը, երբ խորհրդածում ենք կյանքի և մահվան մասին, չենք կարող շտաձել այն մարդկանց մասին, որոնք ուզում են նորից աշխարհը վերածել ընդհանուր, համայնակուլ գերեզմանի, ցանկանում են հավերժացնել նոր մահվան իշխանությունը կյանքի վրա, մարդիկ՝ որ մի ձեռքով խաչ են հանում Քրիստոսի առաջ, մյուսով ցեխ են շարտում խաչին և Ս. Հարության խորհրդին: Այդ բոլորը շատ տխուր ապացույցն է անունով միայն ֆրիստոնյա մարդկանց մոտ հարության հավատի բացակայության:

Ապրում ենք ազգովին միջազգային լար-

ված ու բարդ ֆաղափական պայմաններում: Մարդկությունը այսօր ավելի քան մի որևէ ժամանակ կարիքն ունի բարոյական, հոգեվոր վերածնության: Անում և ընդլայնվում է ազատասեր ժողովուրդների շարժումը հանուն մարդկության ազատության, փրկության, երջանկության, աշխարհում խաղաղության: Ամբողջ ֆրիստոնյա մարդկությունը, այդ բովում և հավատացյալ ժողովուրդը մեծ հույսեր է կապում խաղաղության պայքարի վերջնական հաղթանակին, որովհետև խաղաղությունը ժխտումն է մահվան, չարիքի, և փառաբանումը կյանքի, հարության:

Գնալով հզորանում է խաղաղասեր ժողովուրդների, այդ բովում և ֆրիստոնյա ժողովուրդների շարժումը հանուն կյանքի: Խաղաղության համար մարտնչող ժողովուրդները հավատում են իրենց մեծ և արդար գործի հաղթանակին, որովհետև խաղաղությունը կհաղթի պատերազմին, ինչպես Քրիստոսը՝ մահվան:

Քրիստոս իր կենարար հարությանը ստեղծել է նոր կյանք մարդկանց համերաշխության և երջանկության համար:

20 երկար դարեր չեն կարողացել մահի ֆրիստոնյա, խաղաղասեր ժողովուրդների ստից հարության հույսն ու հավատը:

Հանուն խաղաղության մղվող պայքարում ֆրիստոնեական եկեղեցիների ձայնը պետք է վճռական հնչի ի նպաստ խաղաղության, ընդդեմ պատերազմի:

Հարուցյալ Փրկիչը աշխարհին խաղաղություն է բերում, մի բան, որին ցանկանում են ժողովուրդները:

«Այսօր է գոր արար Տէր, եկայք ցնծացու՛ք և ուրախ եղիցու՛ք ի սմա» (Սաղմ. ձժԸ 24):

